

Կ.Գանձակեցի: Ըստ այդ տեղեկությունների՝ Սոփսես Գ-ին հաջորդել են «Աստուծո այր Մարկոս Ա-ն, ապա Հովսեփ Գ-ն»<sup>1</sup>:

#### Резюме

Со второй половины IX века, вследствие политических обстоятельств, ослабли связи между Всеармянским католикосатом и окраинными епархиями. В результате, некоторые окраинные епархии, в том числе Албанская и Сюникская епархии приобрели определенную самостоятельность что, однако, никогда не приводило к полному отделению. И во второй половине X века, в связи с усилением армянского царства Багратидов, снова упорядочилась деятельность Всеармянского Святого Престола.

#### Summary

Since the second half of the 9th century, in consequence of political circumstances, the relationship between Pan-Armenian Catholicosate and outlying dioceses weakened. As a result, some outlying dioceses, including Albanian and Syunikian dioceses gained certain autonomy which, however, never led to a complete separation. And in the second half of the 10th century, in connection with the strengthening of the Armenian kingdom of Bagratids, the activity of Armenian Holy See was restored again.

**ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԱՀԱՅ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ  
Վահրամ Բալայան**

*Պատմական գիտությունների թեկնածու*

---

<sup>1</sup> Կ.Գանձակեցի, էջ 199: Տես նաև՝ Ղ.Ալիշան, Հայապատում, հ.Բ, Վենետիկ, 1901, էջ 386:

ԱրդՀ

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին հայ ժողովրդի ապագա գրական շարժումը թևակոխեց նոր փուլ: Երևան եկան այդ շարժման գաղափարախոսները, որոնք հանդես էին գալիս քաղաքական որոշակի ծրագրով:

Այդ շարքում առավել ընդգծված գործիչներ էին Սյունիքի մելիքական տների հայրենասիրական ավանդույթներով դաստիարակված Իսրայել Օրին և Արցախի Հասան-Ջալալյան մեծանուն տոհմի արժանի ժառանգ Եսային, որը, 1703 թվականից սկսած, կաթողիկոս ընտրվելու օրից դարձավ ազատագրական պայքարի անխոնջ մարտիկներից մեկը:

Իսրայել Օրին քաջ գիտակցում էր, որ իր ծրագիրը հնարավոր է իրագործել բուն մայր երկրում կազմակերպված ուժերի առկայության դեպքում:

Որպես իրական և շոշափելի ուժ՝ նա տեսնում էր Արցախի մելիքներին և Գանձասարի կաթողիկոսին:

Պատահական չէ, որ 1701թ. Մոսկվայում, իշխան Գոլովինի հետ ունեցած զրույցում, ակնարկում է, որ Մեծ Հայքում կա հինգ նահանգապետ<sup>1</sup>, որոնք, ռուսական զորքերի մոտենալու դեպքում, «24 ժամ էլ չի անցնի, որ նրանք կքշեն անհավատներին և 15 օր էլ չանցած, կտիրեն ամբողջ երկրին»<sup>2</sup>:

Անգեղակոթի ժողովը լիազորագիր և մելիքների կողմից ստորագրված, բայց չգրված թուղթ տվեց Իսրայել Օրին՝ նրան լիազորելով իրենց անունից դիմումներ գրել: Հետագայում, Մոսկվայում, Օրին այդ իրավասու թղթերն օգտագործում է: Այս առիթով Ա.Հովհաննիսյանը գրել է. «1703թ. խմբագրած նրանց դիմումներն անմիջականորեն համընկնում էին եթե ոչ Ղափանի մելիքների, գեթ Ղարաբաղի մելիքների և մանավանդ սրանց քաղաքական ղեկավարի՝ Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի տրամադրությանը»<sup>3</sup>:

Վերոհիշյալ փաստի մասին են խոսում նաև Անգեղակոթի ժողովին նախորդած իրադարձությունները:

<sup>1</sup> Իսրայել Օրին նկատի ունի խամսայի մելիքներին:

<sup>2</sup> Г.Ззов, Сношения Петра Великого с армянском народом, СПб, 1898, с. 76.

<sup>3</sup> Ա.Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Եր., 1959, էջ 523:

1699թ. գարնանը Օրին վերադարձավ Հայաստան՝ իր հետ բերելով Հռենոսյան Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի նամակը՝ հասցեագրված հայ մելիքներին և էջմիածնի ու Կապանի կաթողիկոսներին<sup>1</sup>:

Քննարկվող ժամանակահատվածում Կապանում կաթողիկոսական աթոռ չկար, բնականաբար դա վերաբերում է Գանձասարի կաթողիկոսին: Հովհան Վիլհելմին ուղղորդելու գործում անկասկած իր դերն է ունեցել Իսրայել Օրին, որովհետև նրա հետագա գործունեության առանցքում Արցախն էր՝ յուր հոգևոր և աշխարհիկ տերերով հանդերձ:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Անգեղակոթի ժողովի որոշմամբ, Օրիի օգնական է նշանակվում Արցախի Ս.Հակոբ վանքի միաբան Մինաս վարդապետ Տիգրանյանը, որը մինչև իր կյանքի վերջն անդադրում ծառայում էր հայրենիքի ազատագրության գործին:

Մինաս վարդապետը և Իսրայել Օրին բանակցություններ են վարել ցարական իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ փորձելով Ռուսաստանի միջոցով հասնել իրենց ծրագրերի իրագործմանը: Այդ բանակցությունների արդյունքները նրանք հաղորդեցին հայ մելիքներին, Գանձասարի ու էջմիածնի կաթողիկոսներին: Այդ առաքելությամբ 1702թ. Գանձասարում և էջմիածնում եղավ Մոսկվայում ապրող մի հայ կապիտան Միրոն Վասիլը:

Նամակներում Օրին կաթողիկոսներին և մելիքներին հորդորում էր, որ նրանք նախապատրաստվեն՝ մասնակցելու ազատագրական պայքարին և իրենց կողմից դիմումներ հղեն ռուսական պետությանը: Գալիք պարսկական արշավանքի մանրամասները նախապատրաստելու համար Պետրոս Առաջինն անհրաժեշտ գտավ հետախուզել ապագա ռազմական գործողությունների թատերաբեմը և պարզել Այսրկովկասի ժողովուրդների տրամադրությունները Ռուսաստանի հանդեպ: Օրին պատրաստակամություն հայտնեց մասնակցելու հետախուզական այդ աշխատանքներին: Նա առիթը փորձում էր օգտագործել, մանավանդ, հայ մելիքների և Գանձասարի կաթողիկոսի հետ իր կապերն ամրապնդելու համար: Արքունիքը նպատակահարմար գտավ, որ դեսպանությունը գլխավորի հենց ինքը՝ Օրին: Իր առաքելության ընթացքում Օրին հանդիպումներ ունեցավ Գանձասարի կաթողիկոսի և Արցախի մելիքների հետ: Ժամանակի ամենալուսավորյալ անհատներից մեկը՝ Եսայի Հասան Զալալյանը, սերված լինելով Առանշահիկների

<sup>1</sup> Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 230:

հինավուրց նախարարական տոհմից, արտահայտում էր ոչ միայն հայ հոգևոր և աշխարհիկ, այլև բովանդակ արցախահայության ձգտումներն ու տրամադրությունները: Ռուսաստանի և Ուկրաինայի հայ եկեղեցական համայնքները Գանձասարի կաթողիկոսությանը ենթարկելու նպատակին հետամուտ՝ Եսային քաղաքական շեշտված հակում ուներ դեպի Ռուսաստանը: Հայ իշխող դասի ներկայացուցիչների մեջ առաջիններից մեկն էր նա, որ ի սկզբանե հակված էր դեպի Օրիի մոսկովյան ծրագիրը և հետագայում հանդես եկավ որպես այդ ծրագրի կենսագործման եռանդուն պրոպագանդող և կազմակերպիչ: Այդ հանդիպումն առավել կարևորվում է, որովհետև Արցախի հայ տերերը սերտ կապեր և ազդեցություն ունեին ոչ միայն հայկական ողջ լեռնաստանի, այլև հայաշատ վայրերի վրա: Օրիի՝ Արցախի մելիքների հետ հանդիպման մասին է վկայում հայ գործիչների 1721թ. նամակը՝ հասցեագրված Պետրոս Առաջինին: Նամակի հեղինակները վկայում են, որ Օրին տեղեկացել է իրենց երկրի բոլոր եկամուտների, ճանապարհների, մետաքսի արտադրության և պարսկական զորաբանակի մասին: Եսայի կաթողիկոսից և Ղարաբաղի չորս վանահայրերից զատ, այդ նամակի տակ կա Ջրաբերդի Մելիք Եսայու ստորագրությունը<sup>1</sup>:

Հայ ժողովրդի բաղձանքներն անձամբ Պետրոս Առաջինին հաղորդելու համար 1710թ. Եսայի կաթողիկոսը Պարսկաստանից վերադարձող Օրու դեսպանությանը միացավ և ուղևորվեց դեպի Ռուսաստան: 1711թ.՝ Աստրախանում, չպարզված հանգամանքներում, Օրին մահացավ: Նրա գործը շարունակող Եսայի Հասան-Ջալալյանը, վերադառնալով հայրենիք, գիտակցելով սեփական ներուժի կազմակերպման և կանոնավոր հունի մեջ դնելու անհրաժեշտությունը, ձեռնամուխ եղավ Գանձասարի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող գավառների պետական կյանքն ընթացքավորելու դժվար գործին:

Հարկ է նշել, որ քննարկվող ժամանակահատվածում «տիրապետության տակ՝ Գանձասարի վանքի շրջապատում, ինը հարիր գիւղ կայ, եւ այդ գիւղերը մեծ են. ունեն հարիրից մինչեւ չորս հարիր եւ աւելի տուն»<sup>2</sup>:

Նկատենք, որ ուշ միջնադարում հայ նահապետական ամեն մի գերդաստանում (տուն) ապրում էր տասից տասնհինգ մարդ: Նշանակում է,

<sup>1</sup> Армяно-русские отношения в первой трети XVII века, т. 2., ч. 1, док. 161.

<sup>2</sup> Դ.Յոս, նշվ. աշխ., էջ 322:

ամենահամեստ հաշվարկներով, հայոց արևելից նահանգներում և անդրկուրյան հայաշատ գավառներում ապրում էր հայ առաքելական եկեղեցու առնվազն երկու միլիոն հավատավոր: Նրանց հոգևոր, մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքը կազմակերպելու և պետական ծիրի մեջ դնելու նպատակով 1714թ. Եսայի կաթողիկոսը Գանձասարում հրավիրում է գաղտնի ժողով, որտեղ ընդունվում են մի շարք կանոններ.

«ԺԱ. Իւրաքանչիւր մելիք, պարտաւոր է գահերէց ճանաչել Զալալեան մելիքները եւ թէ՛ յայտնի և թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունել Գանձասարի վանքը: Ամէն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամէն գնդապետ՝ իւր զօրավարին եւ ամէն զօրական՝ իւր գնդապետին եւն:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթե վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթե կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ և ուրիշ մելիքների իրավունքը բռնի յափշտակել, կը պատժուի միւսների ժողովով որոշած պատժով եւ ԺԴ (10.000) թուման տուգանք, կըտուծէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին եւ կըտուծէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցաք գործողն թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական եւ մոլիքական խառն ժողովոյորոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամիութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոյա յարիլ:

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի, կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Ի. Իվրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը՝ իւր անձնական շահերից եւ օգուտներից:

ԻԲ. Ամէն մելիք պարտաւոր է գտնուիլ իր զօրաց գլխին պատերազմի ժամանակ եւ խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը եւ զօրավարը:

ԻԳ. Մեզանից ով որ կյանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել եւ արինահեղութիւն պատճառել, այնպիսի մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը գրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրէնութիւն»<sup>1</sup>:

Մինաս Վարդապետ Տիգրանյանն ազատագրական պայքարը գործնական հունի մեջ դնելու և հետագա գործողությունների ծրագիրը ճշգրտելու նպատակով 1716թ. Գանձասարում հանդիպեց Եսայի Հասան-Ջալալյանի հետ:

Մինաս Վարդապետ Տիգրանյանը համանման նպատակով էջմիածնում հանդիպեց Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու (1715-1725) հետ: Ի տարբերություն Եսայի Հասան-Ջալալյանի՝ նա ավելի զգուշավոր էր, իսկ ավելի շուտ՝ անվճռական քաղաքականություն էր վարում: Դրա մասին Մինաս վարդապետը Ռուսաստանի դեսպանական վարչությանն ուղղած 1717թ. մարտի 14-ի զեկուցագրում գրել է, որ Աստվածատուր կաթողիկոսը մեծ մտավախություն ուներ շահից, այնպես չպատահի, որ «այդ մեծ գործը իրենց բոլորի համար կործանարար լինի: Սակայն եթե նորին ցարական մեծութիւնը բարեհաճի պատերազմ սկսել Պարսկաստանի դէմ եւ իր զօրքերը այդ երկիրն ուղարկել, ապա նա իր հաւատարիմների հետ որքան կարող է, որպէս բարի միջոց, կօգնի»: Միաժամանակ նա չի համարձակվում գրավոր դիմել ցարին<sup>2</sup>:

Պատահական չէ, որ Մինաս վարդապետը ռուսական արքունիքի հետ ունեցած բանակցությունների ժամանակ մշտապես ընդգծում էր Եսայի կաթողիկոսի և Արցախի մելիքների պատրաստականությունը՝ ներգրավվելու ապագա տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումներին:

<sup>1</sup> Ա.Բէկնազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 210-214:

<sup>2</sup> Է. Ղանիեյան, Գանձասարի վանքը, Եր., 2009, էջ 37:

Նկատենք նաև մեկ այլ հանգամանք. Աստվածատուր Ա Համադանցին անվճռականություն ցուցաբերեց նաև Արցախի ներքին միաբանությունն անխաթար պահելու գործում:

Այսպես նա Եսայի կաթողիկոսի լիազորություններին համարժեք ճանաչեց, իրեն ինքնակոչ Աղվանից կաթողիկոս հռչակած Երից Մանկանց վանքի Ներսես եպիսկոպոսի իրավունքները: Փաստորեն՝ Հայոց Արևելից նահանգներում հակաաթոռությունն օրինականացվեց, որն իր բացասական հետևանքներն ունեցավ ժողովրդի թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական կյանքում:

Սակայն Եսայի կաթողիկոսը խոհեմություն դրսևորեց և ապագա արհավիրքներին դիմակայելու, պետականաշեն մթնոլորտ ստեղծելու և թշնամու նկատմամբ միասնական ճակատ հարդարելու նպատակով հանդուրժեց մի առ ժամանակ իր կողքին տեսնելու անօրինական կաթողիկոսին, մանավանդ, երբ Ներսեսին հովանավորում էին Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքները:

Ամենայն հավանականությամբ՝ Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների ներուժը մեկտեղելու և Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցուն առավել վճռական դարձնելու նպատակով 1719 և 1721 թվականներին Եսայի կաթողիկոսը երկու անգամ այցելեց Էջմիածին:

Արցախի հոգևոր և աշխարհիկ տերերի անունից 1716թ. օգոստոսի 10-ին դիմեց Պետրոս Առաջինին՝ խնդրելով նրանց վերցնել Ռուսաստանի հովանավորության տակ «...Յառաջ քան զայս առաքեալ ի քումն է թագավորութեն Իսրայէլ Օրի դեսպանն եկն երկիրս Հայոց և զհամբավ բարեյաղութեանդ սփռեալ տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն...: Իսկ այժմ կրկին առաքեալ ի մեծէ թագավորութենդ եղբայրս մեր զՄինաս վարդապետս, որ ի յազգէ մերմէ, եկն եհաս երկիրս մեր և առ մեզ և զբարի և աստուհաճոյ մեզ, և մեր լսելով զուարճացաք և ցնծուցաք ի հոգի և ի մարմին և յօժար սրտիվ կամիմք ընդ հովանեալ թևոց քոց լինիլ...մեք պատրաստ ենք ընդ առաջ քո ըստ իմուն կարողութեանս և մեր նահանգիս մելիքովս և մեծամեծովք և փոքրումբք և յորժամ կամեսցի հզօր և մեծ թագավորդ յաճապարել այսր կամօքն աստուծոյ...»<sup>1</sup>:

Այս շրջանում արցախահայության համար նոր պատուհաս էին դարձել հյուսիսային լեռնական ցեղերի մշտապես կրկնվող արշավանքները: Պարսկաստանի դարավոր թշնամին՝ Թուրքիան, նրան առավել հյուծելու

<sup>1</sup> Армяно-русские отношения в первой трети XVII века, т. 2, ч. 1, док. 360-364.

նպատակով հրահրում էր Ղաղստանի ավարառու լեռնականներին, որոնք էլ մշտապես ահ ու սարսափի մեջ էին պահում Իրանի հյուսիսային նահանգների բնակիչներին: Դրանից առավել շատ տուժում էր հայությունը:

Պարբերաբար կրկնվող ավերիչ արշավանքների առաջն առնելու նպատակով անջատ-անջատ գործող Արցախի մելիքները, ապավինած իրենց անառիկ բերդերին, ստեղծեցին գինական միասնություն, որը պատմությանը հայտնի է սղնախներ անունով: Այդ ամենի կազմակերպիչը դարձավ Եսայի Հասան-Ջալալյանը:

Արդեն կանոնավոր գործը Զրաբերդի շրջանում 1722թ. գարնանն արժանի հակահարված հասցրեց թշնամուն: Ավարառու լեռնականները նահանջեցին դեպի Կուրի ծախսափնյակը և այլևս չհամարձակվեցին երևալ Արցախի կողմերում:

Հյուսիսային լեռնականների դեմ ինքնապաշտպանության գործը տարերայնորեն վեր է ածվում պարսկական իշխանության դեմ ուղղված ժողովրդա-ազատագրական շարժման: Այդ շարժման ղեկավարները ժամանակին այս երևույթի մեջ նշմարում էին հայոց ազգային հանգած իշխանության «նոր նորոգում»<sup>1</sup>:

Լեզգիների դեմ մղվող պայքարը՝ սղնախական շարժման սկզբնափուլը և այն հակապարսկական ընդվզման վերածելու ընթացքը համընկեց Եսայի կաթողիկոսի 1722թ. մայիսի 28-ին Տփղիս մեկնելու փաստի հետ:

Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս ասելու, որ Եսայի Հասան-Ջալալյանը փորձ է կատարում ազգային ազատագրական պայքարը դուրս բերել համահայկական հարթույթից՝ նրա մեջ ներգրավելով նաև քրիստոնեական Վրաստանը:

Հիշենք, որ Եսայի Հասան-Ջալալյանն իր այս ծրագիրը փորձում էր իրագործել Հակոբ Զուղայեցու ժամանակ՝ գործակից դարձնելով հայոց կաթողիկոսին:

Այդ ամենի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ 1722թ. սեպտեմբերի 22-ի Գանձակի մոտ՝ Զոլակ գյուղում հայ և վրաց ռազմական ուժերի հանդիպումը: Հայկական 10 հազարանոց ընտիր զորքը գլխավորում էր Եսայի կաթողիկոսը և Ավան, Շիրվան, Շահին ու Սարուխան հարյուրապետերը:

<sup>1</sup> Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյան, Պատմություն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 58:

Եսայի կաթողիկոսը հայտարարեց, որ հայերն իրենց հոգիները, զավակներին և ունեցվածքն ի սպառ են դնում սկսած գործին<sup>1</sup>: Բայց ռուսական և վրաց-հայկական զորքերի նախատեսված հանդիպումն ու միավորումը չիրականացավ:

Պատմագիտության մեջ այն թյուր կարծիքն է տիրում, թե իբր միջազգային դրության լարվածության մեծացումը, մյուս կողմից՝ ռուսական նավերի խորտակվելն ու վնասվելը, պարենի և զինամթերքի հսկայական կորուստը, հիվանդություններն ու մարդկային զոհերը դժվարացրին արշավանքի ողջ ծրագրի կենսագործումը<sup>2</sup>:

Մինչդեռ իրականում Պետրոս առաջինի ժամանակ ողջ Այսրկովկասն ու մասնավորապես խնդրո առարկա տարածքի Ղարաբաղի գրավման, առավել ևս ազատագրման մասին մոտակա ծրագրեր անգամ չկային: Խնդիր էր դրված նվաճել մետաքսառատ մերձկասպյան շրջանները, որոնց կարիքն անչափ զգում էր Ռուսաստանի նոր ձևավորվող մանուֆակտուրային արտադրությունը: Ռուս հեղինակները ժամանակին նկատել են, որ Պետրոս առաջինի հիմնական նպատակն էր Ռուսաստանի գերիշխանությունը տարածել Կասպից ծովի վրա, որը Եվրոպան Ասիայի հետ կապող միջանկյալ օղակ կդառնար<sup>3</sup>:

Ռուսական արքունիքը ծրագրել էր նվաճել մինչև Կուր գետը, այնուհետև գետի ակունքներում կառուցել խոշոր առևտրական քաղաք, որը հայ, վրացի, պարսիկ և հնդիկ առևտրականների համար կդառնա հավաքատեղի: Այստեղից էլ ձանապարհը կծգվի մինչև Աստրախան<sup>4</sup>:

Այդ մտադրությունների մասին 1722թ. սեպտեմբերին Պետրոս առաջինը բաց տեքստով հայտնում է նաև Նեպլյուկին. «Մեր զորքերը Վրաստանով և Հայաստանով անցնող Թուրքիայի սահմաններին չեն մոտենա և միայն Կասպից ծովի առափնյա շրջանները կմտնեն, որի մասին քեզ հանձնարարում ենք Բարձր Դռանը հավաստիացնել»<sup>5</sup>:

<sup>1</sup> Եսայի Հասան-Ջալալյան, Պատմություն համարուս Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1882, էջ 45-49:

<sup>2</sup> ՀԺՊ, հ. IV, Եր., 1972, էջ 148, П.Бутков, Материалы для новой истории Кавказа, ч. 1, СПб, 1869, Ф.Соуменов, Описание Каспийского моря, СПб, 1763, Комаров, Персидская война 1722-1725гг., М., 1845, С.Соловьев, История России с древнейших времен, т. 18, М., 1867, Комаров, Персидская война 1722-1725гг., М., 1845; Нечаев, Внешняя политика Петра Первого, СБ. «Три века», т. 3, М., 1912 Мельгунов, Поход Петра Великого в Персию, «Русский вестник», т. 110, 1874, В.Лыщев, Персидский поход Петра I 1722-1723гг., М., 1951.

<sup>3</sup> История человечества, под общей редакцией Г.Гельмольта, том V, Юго-Восточная и Восточная Европа, С-Петербург, типо-литография книгоиздательского товарищества «Просвещение», 1905, с. 566.

<sup>4</sup> Голиков, Деяние Петра Великого, том 8, с. 263-264.

<sup>5</sup> АВПР, ф. СРТ, 1722, д. 4, с. 56.

Այդ ծրագրերը կյանքի կոչելու նպատակով 1725թ. հոկտեմբերի 23-ին Գաղտնի խորհուրդը որոշում է. «Կուր գետի ափին հիմնավորվել և այդ նպատակով մի քանի ամրոցներ կառուցել»<sup>1</sup>: Վերոհիշյալ ծրագրերից զատ՝ Պետրոս առաջինը մերձկասպյան առափնյա շրջաններով հետազայում Հնդկաստան հասնելու գաղափարն էր մտմտում: Այդ առիթով նա գեներալ Մատյուշկինին գրել է. «Բաքուն մեր բոլոր գործերի բանալին է»<sup>2</sup>:

Ազատագրական պայքարի թափը չկոտրելու, ժողովրդի մոտ հուսալքություն չառաջացնելու նպատակով Եսայի կաթողիկոսը հորդորում է Մինաս վարդապետին, ապագա արշավանքը կազմակերպելու միտումով, գոնե ռուսական արքունիքից հուսադրող հավաստիացումներ ստանա:

Պետրոս Առաջինը, անսալով Մինաս վարդապետի խնդրանքին, հավաստիացնում է, որ, Կասպից ծովի առափնյա շրջաններին տիրելուց հետո, հայերին կազատի անհավատների լծից<sup>3</sup>:

Իր հերթին Պետրոս Մեծը ռուսական ազդեցությունն Արցախում չկորցնելու, տղնախների հետագա անելիքները պարզելու, ինչպես նաև հետագայում հակաթուրքական և հակապարսկական ճակատ ստեղծելու նպատակով՝ 1723թ. Այսրկովկաս և, մասնավորապես, Արցախ է ուղարկում դեսպանորդ Իվան Կարապետին: Նույն թվականի վերջին Իվան Կարապետը կանցլեր Գոլովինի նամակը, ուղղված Ներսես կաթողիկոսին, Գյուլիստանի մելիք Եսայուն, Ջրաբերդի մելիք Սարգսին և այլ մելիքների ու յուզբաշների վերցրած, որտեղ օգնելու և ազատագրելու նոր խոստումներ էր տրվում<sup>4</sup>, մեկնում է Արցախ:

Ապագա արհավիրքներին դիմակայելու նպատակով, Եսայի կաթողիկոսի նախաձեռնությամբ, Արցախի անջատ-անջատ գործող ուժերը մեկտեղվեցին և, ապավինելով անառիկ բերդերին, ստեղծեցին զինական միասնություն, որը պատմությանը հայտնի է տղնախներ անունով:

Հիմնական ուժերը կենտրոնացված էին Ջրաբերդի և Գյուլիստանի գավառներում, Մռովի ստորոտում: Այն հայտնի է նաև Մեծ տղնախ անունով: Ի սկզբանե Մեծ տղնախի զինվորականության ղեկավարն ու ղեզնչողը Գանձասարի Եսայի կաթողիկոսն էր: Հայոց զորքի մի մասը

<sup>1</sup> Е.Зевакин, Прикаспийские провинции в эпоху русской оккупации XVIII в., «Известия общества обследования и изучения Азербайджана», 1927, N 5, с. 15.

<sup>2</sup> Г.Абдулаев, Азербайджан в XVIII в. и взаимоотношения его с Россией, Баку, 1965, с. 15.

<sup>3</sup> Г.Эзов, *Աշխ.*, էջ 355:

<sup>4</sup> Армяно-русские отношения, т. 2, ч. 2, стр. 26.

տեղակայված էր Քիրսի ստորոտում՝ Վարանդայի Ավետարանոց և Սղնախ գյուղերի տարածքում, ինչպես նաև ներկայիս Շուշի քաղաքի շրջակայքում: Մինչև այժմ էլ Շուշիի հարավ-արևելյան հանդիպակաց ծորի անմատչելի ծերպերում պահպանվում են պաշտպանական կառույցների մնացորդները: Փոքր սղնախը գլխավորում էր Ավան հարյուրապետը, որը մինչև 1717թ. Շամախու խանական զորքերի մեջ ծառայող հայ զինվորականներից էր:

Ստանձնելով այսքան բացառիկ մի դեր՝ Եսայի Հասան-Ջալալյանը փաստացի դառնում է երկրի գերագույն տերն ու տնօրենը, կենտրոնացնում իր ամբողջ իշխանությունը, և այնուհետև բանակցություններն ու դիմումներն առանձին անհատների անունից չէին վարվում, այլ հայոց համահավաք ուժի՝ սղնախների, ասել կուզի՝ պետության անունից:

Լեոն իրավացիորեն գրել է. «Դա ժողովրդական մի զինվորություն էր, կառավարվում էր իր առաջնորդների, հրամանատարների խորհրդով, ուր իր տեղն ու ազդեցությունն ուներ նաև Գանձասարի կաթողիկոսը»<sup>1</sup>:

1723թ. Արցախի սղնախականների համար սկսվեց փորձության մի նոր շրջան: Այս անգամ լեռնաստանի հայությանը վիճակված էր դիմակայելու ավելի վայրագ ու ահեղ թշնամու՝ թուրքերին, որոնք համառորեն փորձում էին հասնել Կասպից ծովի ափերը: Թբիլիսին գրավելուց հետո 1723թ. հոկտեմբերին թուրքական 80 հազարանոց զորքը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ շարժվեց դեպի Գանձակ: Քաղաքի պաշտպանությանը մասնակցում էր նաև սղնախների մարտական ուժերի մի մասը: Թուրքական զորքը պարտություն կրեց և նահանջեց՝ Գանձակի պատերի տակ թողնելով հազարավոր սպանվածներ: Դեռ ավելին, հայ զինվորականության պահանջով Իբրահիմ փաշան ազատ արձակեց քաղաքի շրջակա գյուղերից գերեվարված հայերին: Ականատես լինելով հայկական բանակի մարտունակությանը՝ Իբրահիմ փաշան Ավան հարյուրապետին հակապարսկական և հակառուսական ճակատ ստեղծելու առաջարկություն արեց: Հայերը մերժեցին: Ցարական արքունիքն այդ օրերին ոչ թե ձգտում էր աջակցել արցախահայությանը, այլ ուղիներ էր որոնում լեզու գտնել Պարսկաստանի և Թուրքիայի հետ:

Դեռ ավելին, 1724թ. հունիսի 12-ին Կ.Պոլսում ռուսական դեսպան Նեպլյուևը Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որի համաձայն ռուսները ճանաչեցին թուրքերի իրավունքներն Իրանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ՝ ներառյալ Թիֆլիս, Գանձակ, Նախիջևան քաղաք-

<sup>1</sup> Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 3, գիրք 2, Եր., 1973, էջ 140:

ները, Ղարաբաղի ու Կապանի մարզերը, ինչպես նաև նրանց տիրապետությունն Արդեբիլ-Թավրիզ գծից դեպի հյուսիս և Թավրիզ-Քերմանշան գծից դեպի արևմուտք ընկած իրանական հողերի վրա<sup>1</sup>:

Կոստանդնուպոլսի ռուս-թուրքական պայմանագրով չէր կարելի միջամտել կողմերի գրաված երկրամասերի գործերին, ուստի ռուսական արքունիքը պարբերաբար խուսափողական պատասխաններ էր տալիս օգնություն խնդրող հայերի նամակներին՝ միաժամանակ զգուշացնելով վրաց և հայ գործիչներին՝ չգրգռել թուրքերին:

Ստեղծված պայմաններում թուրքական հրամանատարության առաջնահերթ խնդիրն էր՝ վերացնել Ռուսաստանի և Թուրքիայի արանքում գոյություն ունեցող հայկական սեպը:

Այդ խնդիրը լուծելու համար 1724թ. հունիսին թուրքական զորքը Գյումրիի վրայով մտավ Արարատյան դաշտը, այնուհետև գրավեց Նախիջևանն ու Օրդուբադը, ապա թափանցեց Գողթն, իսկ հարավում նվաճեց Համադանը: Չորս կողմերից աքցանի մեջ առնվեց Երևանը: Չնայած քաղաքի հերոսական պաշտպանությանը՝ սեպտեմբերի 26-ին պաշարված Երևանն անձնատուր եղավ:

Երևանը գրաված թուրքական հրամանատարությունը հարկադրեց էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսին՝ նամակ գրել Գանձասարի Եսայի կաթողիկոսին և խորհուրդ տալ նրան, որ համոզի Արցախի մելիքներին՝ պատգամավորներ ուղարկել թուրքական հրամանատարության մոտ և իրենց հպատակությունը հայտնել, այլապես նա սպառնում է մտնել Ղարաբաղ և կոտորել հայերին:

Եսայի կաթողիկոսը և Ղարաբաղի քաղաքական շրջանները որոշել էին մինչև վերջ կռվել թուրքական բանակի դեմ, ուստի և մերժեցին թուրքերի առաջարկը:

Մյուս կողմից էլ կաթողիկոսն անընդունելի է համարում Պետրոս Մեծի առաջարկը՝ արցախահայությունը վերաբնակեցնելու Կասպից ծովի առափնյա շրջաններում՝ գտնելով, որ տեղահանման ընթացքում թուրքերի համար նպաստավոր պայմաններ կստեղծվեն հայերին կոտորելու և գերեվարելու համար:

Ի մի բերելով ուժերը՝ Եսայի կաթողիկոսն իր զինակիցների հետ միասին շարունակեց պայքարն ահել թշնամու դեմ:

<sup>1</sup> Полное собрание законов Российской империи, т. VII, СПб, 1730, стр. 303-309., М. Соловьев, История России, т. 18, М., 1968, стр. 73.

Արյունահեղ կռիվները, ինչպես գրում է Մինաս վարդապետը, տեղի էին ունենում համարյա ամեն օր<sup>1</sup>: Ուշագրավ է գեներալ Դուգորուկովի 1727թ. մայիսի 11-ին իր կառավարությանը հայտնած այն զարմանքը, թե ինչպես են հայերը դիմանում ստեղծված դրությանը. «Միայն աստված էր պահպանում հայերին, թե չէ՝ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թե դեռ ինչպես են նրանք պահվում այդքան զորեղ թշնամու առաջ»<sup>2</sup>:

Ազատագրական մաքառումների ամենաթեժ պահին՝ 1728թ., վախճանվեց Եսայի Հասան-Ջալալյանը:

Զնայած այդ մեծ կորստին՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռը մինչև Գյուլիստանի պայմանագրի կնքումը, զինված պայքարից մինչև դիվանագիտական փնտրտուքների ոլորտը, շարունակում էր մնալ հայոց արևելից նահանգների ազատագրական պայքարի դրոշակակիրը:

#### Резюме

Освободительная борьба армянского народа в конце 17-го - начале 18-го века вступила в новую фазу. Появились идеологи этого движения, выступившие с определенными программами. В их ряду особенно заметную роль играл достойный представитель Арцахского рода Асан-Джалалянов, Есаи. С момента избрания католикосом (1703 г) он стал одним из преданных борцов освободительного движения и основателем новой государственности.

#### Summary

The struggle for the independence of the Armenians in the late 17th and early 18th century entered a new phase. Some ideologists of this movement appeared, with their certain programs. Among them a particularly significant role was played by a worthy representative of the Artsakhian genus Hasan Jalalyan, Yesai. When elected as a Catholicos (1703), he became one of the faithful fighters of the liberation movement and the founder of the modern statehood.

### ՂԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

#### Վլադիմիր Հովսեփյան

*ԼՂՀ Վերաքննիչ դատարանի նախագահ*

<sup>1</sup> Դ.Յոս, նշվ. աշխ., էջ 459:

<sup>2</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 174: